



## Մ Ե Լ Ի Ք - Ի Ի Ս Ո Ւ Փ

ՊԵՏՄԵՆԿԱՆ ՊՕԷՄԱ

(1728—1750)

### I

**Ա**յն ժամանակ մեր որբ ազգըն անտէր  
Դեռ չէր վայելում խընամբը Կայսեր.  
Հզօր Ռուսոխայի Արծիւըն արթուն  
Դեռ չէր տարածել բարձունքից անհուն  
Իր ազատարար, իր կարող թևեր  
Եւ պատսպարել մեր դաշտ ու լեռներ<sup>1</sup>).  
Դեռ մեր հալածուած ազգը ցիրուցան  
Ի նքըն էր զէնքով պաշտպանում իրան,  
Երբ յանկարծ մեռաւ քաջ Մելիք-Աբով<sup>2</sup>),  
Թողալից աշխարհ հայերի ողբով:

### II

Մահուան մահիճում իշխանն անգօր  
Կանչեց իրա մօտ իր Թամրազ եղբօր,  
Վարչութեան դեկը յանձնելով նորան,  
Պետ նշանակեց իր մելիքութեան.  
Կրտսեկեց, որ նա լինի խնամատար,  
Պահի, պաշտպանի Գիւլիստան աշխարհ,  
Որ հովիւ լինի իր հայրենիքին  
Եւ իշխանական որբ ընտանիքին,  
Մինչև որ Իւսուփ որդին մեծանայ,  
Ժառանգի իր հօր ու մելիք դառնայ:

### III

Իսկ իր պատանի միակ ժառանգին  
Աբովն համբուրեց օրհասի ժամին,

Եւ տալով նորան սաղափով նախշած,  
 Արծաթ օղերով հրացանն, ասաց.  
 «Ահա, սա այն է, որով Պաղ-Աբով՝<sup>3)</sup>  
 Պահեց Գիւլիստան ազատ, ապահով.  
 Սա այն զէնքն է ահեղ, մահաբեր,  
 Որից սոսկացին մեր թշնամիներ,  
 Որը պաշտպանեց մեր եկեղեցին  
 Եւ փառք ու պարծանք վաստակեց հային».

## IV

«Արիւնհեղութեան ըռպէին դաժան՝  
 Սա ինձ եղել է բնկեր անբաժան.  
 Աչքիս լոյսի պէս՝ սիրելի եմ, խնամիկ,  
 Իմ հողի նման՝ սիրելի, պաշտպանել.  
 Ա՛ռ, ուսըդ գցիր, սիրելի զաւակ,  
 Պահիր, պահպանիր հօրըդ յիշատակ.  
 Անարատ է սա, սուրբ, անապական.  
 Փորրոգութեամբ մի գուցէ սորան  
 Թուրքերի առաջ պղծես, անարդես,  
 Քո հօր աւանդը արատաւորես!..

## V

«Ջունչդ բերանիդ եթէ այս զէնքը՝<sup>4)</sup>  
 Մատնես դարչելի ոսոխի ձեռքը,  
 Այնժամ սառ հողի կուրծքը կը ճեղքեմ,  
 Չիրմիս խորքերից անէ՛ծք կը թափեմ  
 Ստո՛ր, անարժան ժառանգիս ղլխին.  
 Անէ՛ծքս ահեղ՝ հասնելով երկին՝  
 Չանթեր կը թափի բարձունքից անհուն,  
 Բնաջինջ կանխ իմ անարդ որդուն!..»  
 Աբովը, տալով հրաժեշտը վերջին,  
 Աչքերը փակեց, աւանդեց հոգին».

## VI

Եւ կամարակապ պալատըն յանկարծ  
 Հառաչ ու ողբով թնդաց, զղրդաց..

Լալիս էր Իւսուփ, լալիս էր այրին,  
 Ազգ ու ազգական ողջ լալիս էին.  
 Սուգըն ընդհանուր բարձրանում էր վեր,  
 Չարժում, տատանում Հոռեկայ լեռներ.  
 Զօրք ու զօրապետ՝ տխուր, վշտաբեկ՝  
 Գործքը Արսիլի յիշելով մէկ-մէկ,  
 «Ողորմի» էին տալիս մեկլքին,  
 Հեկեկում անվերջ, լալիս դառնազին.

## VII

Եւ ժողովուրդըն ողջ Գիւլիստանի,  
 Սգալով մահըն հզօր իշխանի,  
 Համբուրեց սառած նորա այն աջը,  
 Որով պահում էր, պաշտպանում քաջը  
 Մեր եկեղեցին զազիր թուրքերից,  
 Մեր սուրբ երկիրը չար փորձանքներից.  
 Եւ քառասուն օր՝ զիշեր ու ցերեկ՝  
 Ազգը լալիս էր դառը, վշտաբեկ.  
 Ամբողջ մի տարի լեռների լանջում  
 Ոչ նըւագարան, ոչ երգ էր հնչում:

## VIII

Երկինքը յուզուած՝ որպէս հրեղէն ծով  
 Վաղ առաւօտեան բռնկուեց բոցով.  
 Լեռան կատարից բընութեան արքան  
 Իր պայծառ ցոլքը թափեց Գիւլիստան.  
 Բարձր գմբէթը հոռեկայ վանքի  
 Եւ կամարները վեհ ապարանքի  
 Արեւի շողքից ոսկեգօծուեցան.  
 Ասուն, անասուն քնից արթնացան.  
 Դալար անտառի նախշուն հաւքերը  
 Սկսան իրանց անուշ երգերը:

## IX

Իսկ Մելիք-Թամրազ իր ապարանքում,  
 Նստած սիւնագարդ, չքեղ սրբահում,

Իր առաւօտեան ճաշը վայելած՝  
 Ղայլան էր ծխում: Ձեռները խաշած,  
 Գօտկի մէջ խրած ոսկէ ունեկիր,  
 Կանգնած էր հեռու մի հեղ մանկկաւիկ.  
 Ղայլանը հէնց որ հանդչում էր, մարում—  
 Իշխանի համար կրակ էր բերում.  
 Եւ ուր-մուր կապոյտ բուլաներ  
 Բարձրանում էին, գնում դէպի վեր:

## X

Տխրութեան մոայլ ամպը ճակատին՝  
 Նայում էր սնթարթ Թամրազ յատակին.  
 Խոհերը ծանր, ծանր ու դաժան  
 Կեղեքում էին և տանջում նորան.  
 Եղբոր մահըն էր նա արդեօք յիշում  
 Եւ ինքն իրան մորմորում, ցաւում.  
 Թէ հայրենիքի հողմերըն էին  
 Պաշարել նորա սիրտն ու հոգին.  
 Գուցէ վտանգ էր հային ըսպառնում,  
 Կամ մի չար համբաւ նորան ջլատում...:

## XI

Ոչ!.. Այդ Իւսուկն էր, Իւսուկը հօր,  
 Որ վրդովում էր, տանջում հօրեղբոր.  
 Իւսուկն աճում էր, Իւսուկ մեծանում—  
 Ժամը հասնում էր, ժամը մօտենում,  
 Երբ Թամրազ պիտի յանձնի ժառանգին  
 Վարչութեան ղեկը, իսկ ինքը նախկին  
 Իր փառքից գրկուէ՛, գրկուի՛ անունից  
 Եւ հրաժարուի՛ իր իշխանութիւնից...  
 Ա՛խ ինչնու, ինչնու Թամրազ յաւիտեան  
 Չը մընայ մեկը, չը մընայ իշխան...:

## XII

Երկնակամարում՝ գիշերուայ կիսին՝  
 Ամպերի միջին լողում էր լուսին.

Ջողքերըն արօտ թափել էր նա ցած,  
 նայում աշխարհին դէմքով տխրամած:  
 Ամեն ինչ լուռ էր, ամեն տեղ լսողազ,  
 Հանգիստ քնած էր ամբողջ Ղարաբաղ:  
 Բայց Գիւլիստանի բերդում՝ դեռ անքուն՝  
 նստած էր Ղամար Սուլթանը գարթուն,  
 նստած նայում էր քնած գաւակին,  
 Հողով անձնատուր դառը վշտերին:

## XIII

Ամուսնու մահուան ցաւ ու կսկիծը  
 Գեռ չէր փարատուել նորա սրտիցը,  
 Երբ նենգ, ընչաքաղց Թամրազը դաժան՝  
 Զլացած փառքով մշտընջենական՝  
 Յափըշտակել էր, կողոպտել եղբօր  
 Գոյքը սեփական, բարիքը բոլոր,  
 Հալածանքների մատնել Իւսուփին,  
 Հարստահարում, ընկըծում որբին:  
 Իւսուփի կեանքը Թամրազի համար  
 Անտանելի էր, դառնազին իսպառ:

## XIV

Պէտք է վերջ դնի Թամրազ այդ կեանքին,  
 Պէտք է չքացնի Թամրազ ժառանգին!..  
 Հնա, մի պայծառ օր՝ դաշտում կամ սարում,  
 Կամ թէ գիշերով՝ Գիւլիստան բերդում՝  
 Թամրազը ծածուկ կը սպանի որբին  
 Եւ դին կը ձգի անգունդը մթին.  
 Կամ թէ կը լսաբի, կը տանի ձորը  
 Եւ իր կէռ թուրը կը խրբի փորը...  
 Գաղտնիքըն ահեղ կը մընայ գաղտնիք,  
 Թամրազն էլ առ միշտ կը մընայ մնլիք:

## XV

Բայց Ղամար Սուլթան՝ հովուի պէս արթուն՝  
 Գիշեր ու ցերեկ հսկում էր որդուն:

Անուլթ Թամրազի սիրտը նենգաւոր  
 Կարդում էր հեռուից այրին սգաւոր,  
 Կարդում էր հեռուից — սոսկում, սարսափում,  
 Մռայլ մտքերից տանջում, կեղեքում...  
 Իւսնւին էր միայն մօր վերջին յոյսը,  
 Հանգած օջաղի ապագայ լոյսը.  
 Իր մօր աչքերից նա պիտի սրբէր  
 Նորա յորդառատ, աղի արցունքներ...

## XVI

Եւ այրիացած հէգ Ղամար Սուլթան  
 Դառը լալիս էր անտէր, անպաշտպան.  
 Ողբում էր իր քաջ ամուսնու մահը,  
 Ողբում իր ազգի խաւարած ջահը.  
 Արիւննոտ վէրք էր բացուել կրծքի մէջ,  
 Վէրքը ցաւում էր, մրմնջում անվերջ,  
 Բայց ոչ մի դարման, ոչ մի դեղ չը կար,  
 Որ բուժէր շուտով կուրծքը ցաւազար.  
 Նա տոչորուում էր, վայում ու լալիս,  
 Անցած օրերին երանի տալիս:

## XVII

Այրին դառնացած, տխուր, վշտաբեկ,  
 Յիշում էր անցած օրերը մէկ-մէկ.  
 Յիշում էր նա իր կեանքը կուսական,  
 Երբ դեռ ապրում էր տանը հայրական.  
 Օ, այնժամ ջահէլ Սուլթանը Ղամար՝  
 Չքեղ գարնան պէս՝ զըւարթ էր, կայտառ,  
 Զ'ունէր ոչ մի հոգ, չ'ունէր ոչ մի դարդ —  
 Ժպտում էր ուրախ, իբրև գարնան վարդ...  
 Միակ աղջիկին էր հարուստ, անուանի  
 Միրզա Մահամադ-Մուստաֆա-Խանի:

## XVIII

Այնժամ Քրիստոսի հաւատը պայծառ  
 Ղամարի սրտին օտար էր իսպառ.

Բայց երբ նա մի օր լեռների լանջում  
 Հօր խաչների մօտ ճեմում էր, շրջում—  
 Քաջ Մելիք-Աբով, տեսնելով հեռուից,  
 Հմայուած կոյսի դոհար աչերից,  
 Յանկարծ սլացաւ արծրի նման՝  
 Եւ յափշտակեց թուրքի աղջըկանս.  
 Տարաւ Գիւլիստան, վանքում <sup>5</sup>) մկրտեց,  
 Սուրբ եկեղեցում հետը պսակուեց...

## XIX

Այդ հերոսութեան, քաջութեան համար  
 Միրեց մելիքին սեաշեայ Ղամար.  
 Իր բոլոր հոգով նա այն օրուանից  
 Միացաւ հայի Հաւատին անբիծ.  
 Իր քաջ ամուսնունն անձնատուր հղած,  
 Հայ ժողովրդից յարգուած ու պաշտուած,  
 Երկան տարիներ իր ապարանքում  
 Անհոգ ու զրւարթ կեանք էր վայելում.  
 Բայց երազի պէս՝ անցան, գնացին  
 Այն երանաւէտ օրերը նախկին...

## XX

Բարձր, սեպացած ժայռի կատարին,  
 Մառնորակ ու վեռ Ինջայի ափին,  
 Գանգնած էր տխուր, սակայն ահաւոր,  
 Գիւլիստան երկրի բերդը սգաւոր:  
 Իսկ այնտեղ հեռու, շքեղ պալատում,  
 Խրախճանքի ուրախ աղմուկ էր հնչում.  
 Թմբուկ ու փողեր, երգ ու կատակներ  
 Թնդացնում էին շրջակայ լեռներ...  
 Լսում էր հեռուից ամբողջ յուզուած,  
 Խոր հոգուց հանում, դառնութեամբ լցուած:

## XXI

Թամրազն այնտեղ հանդէս էր սարբել,  
 Թուրք հարկահանին ճաշի հրաւիրել:

Դեռ մինչև այնօր Գիւլիստան աշխարհ  
 Հարկ չէր վճարել թուրքերին խսպող.  
 Արձակ-համարձակ, սուրբն իր ձեռքին՝  
 Զարդել էր, վանել հայր պարսրկին.  
 Դեռ Կալ-Աբովի հողում սրբազան  
 Ոտքը չէր դրել ոչ մի հարկահան,  
 Անյաղթ, աննկուն՝ քաջն անվահեր  
 Պաշտպանել էր միշտ իր դաշտ ու լեռներ:

## XXII

Իսկ այսօր... Այսօր Թամրազը դաժան,  
 Մայրենի հողի տէրըն անարժան,  
 Եղբօր յիշատակն ոտնատակ տուած՝  
 Ընդունել է նենգ թուրքին գրկաբաց,  
 Նորա պատիւին սարքել մեծ հանդէս,  
 Նորա առաջին սողում՝ որդնի պէս.  
 Թամրազն այսօր ծաղրի է մատնում  
 Հայի անունը, նորան անարդում.  
 Ազգի քրտինքով վաստակած ոսկին  
 Տալիս է այսօր թշնամի թուրքին:

## XXIII

Թամրազն այսօր, շողորորթելով,  
 Պարսից արքայի ծառայի գլխով՝  
 Թիթեռի նման՝ պտոյտ է գալիս,  
 Նորան մեծարում ու պատիւ տալիս...  
 Ուզում էր Թամրազ լախրշ ոտխին  
 Իր կողմը բաշել, զրաւել պարսրկին—  
 Նորա օգնութեամբ մնալ միշտ մեկիք,  
 Թէկուզ կործանուի բոլոր հայրենիք.  
 Թամրազն այսօր՝ դիւթուած իր փառքով՝  
 Շոյում էր թուրքին ազգի բարիքով:

## XXIV

Պարսից հարկահանն ոսկով շլացած,  
 Գոպց Թամբազին, գովեց և առաց.

«Մ'աշալլա, Թամրազ, դեռ ոչ մի մեղք  
 Զի տուել երբէք մեզ այսքան բարիք.  
 Այ, հալալ լինի քո կերած հացը,  
 Ալլահն օրհնի քո ծծած կաթը!  
 Հզօր, ուրումած խնամքը շահի  
 Պաշտօնիդ միշին քեզ հաստատ պահի!  
 Փէյրամբարը մեծ կեանք տայ մեր շահին,  
 Որ խոնարհ լինես նորա մեծ գահին...»

## XXV

Թամրազ խոստացաւ՝ մինչև իր մահը  
 Պաշաւ: սրբութեամբ Պարսից մեծ գահը,  
 Լինել հրնաղանդ, լինել միշտ հլու,  
 Մ'նալ յաւիտեան ծառայ, հարկատու:  
 Եւ կամենալով հիւրին նենդաւոր  
 Նուիրել ընծայ մի արժանաւոր,  
 Մեղքը լալիշ, ստոր, շողորթ,  
 Ազգի անարժան որդին թուլամորթ՝  
 Զար, դժոխային ժպտը բերնին՝  
 Քծնելով ասաց թուրք հարկահանին.

## XXVI

«Մ'հոռնելուց առաջ՝ իմ եղբայր Աբով,  
 Որ ձեզ ատում էր իր բոլոր հոգով,  
 Յանձնեց իր որդուն մի Ղրիմի հրացան,  
 Հրացանն հմ ասում... հաղուագիւտ մի բան...  
 Կոթը սաղափով գարդարած նախշուն,  
 Ինքը պողպատից, ամուր ու փայլուն.  
 Օղերը արծաթ, մէջը ոլորակ.  
 Իսկ նորա ահեղ, մահաբեր գնդակ  
 Զարկում է անվրէպ իր նպատակին,  
 Ծակում է լեռներ, սլանում երկին...»

## XXVII

«Օճակայն ափսոս, որ այդ անգին զէնքը  
 Տուել են անմիտ երեխի ձեռքը...»

Նա լաւ կը սաղի քաջագոր շահին,  
 Կամ նորա գերարդ մեծ հարկահանին...  
 Եթէ կամենաս՝ կարող ես կանչել  
 Իւտուփին քեզ մօտ ու ձեռքից խելի-  
 Իսկ թէ յանդգնի խօսել հակառակ,  
 Այնժամ երեսին մի փափնակ ապտակ...  
 Նա էլ իր հօր պէս՝ գոռոզ է, յամառ,  
 Ազնիւ թուրքերիդ ատում է իսպառ...»

## XXVIII

Արդէն կատարուեց... յափշտակեցի՛ն...  
 Զէնքը նուիրական խլեց թշնամին.  
 Այն սուրբ, հայրական աւանդըն անբիծ  
 Խլեց թշնամին ժառանգի ձեռքից.  
 Խլեց թշնամին, առանց յաղթութեան  
 Առանց արիւնի, առանց քաջութեան...  
 Երկինքը մթնեց Իւտուփի զլխին,  
 Աշխարհ սևացաւ, խաւարեց չորս դին...  
 Իւտուփ ողբաձայն լալիս է գոչում,  
 Զահէլ վազրի պէս՝ շուրջը թնդացնում...

## XXIX

Զրկուեց հայրական ժառանգութիւնից,  
 Զրկուեց իր սիրած, փայփայած զէնքից.  
 Ամեն օր նորան նա իւր էր քսում,  
 Խնամքով խտտակում, մաքրում, պաշտպանում,  
 Որ երբ մեծանայ, դառնայ մեծ իշխան —  
 Իսպառ տապալի Թամրազին դաժան  
 Եւ սրբանրէր հզօր այն զէնքով  
 Ազգը պահպանի թուրքից ապահով...  
 Այժմ ի՛նչ անի Իւտուփ անպաշտպան,  
 Ո՛ւմ մօտ նա գտնի արդար դատաստան...

## XXX

Եւ նա յուսահատ, մռայլ ու տրտում,  
 Արցունքն աչքին, կսկիծը սրտում՝

Եկաւ սգաւոր բերդը Գիւլիստան,  
 Նետուեց խանդավառ գիրկը մայրական,  
 Որ առժամ հանգիստ առնի մօր կրծքին,  
 Տայ թեթևութիւն իր սրտի վէրքին.  
 Որ մայրը որդու սիրտըն ամուրի,  
 Իր բուռն սիրով նորան ըսփոփի,  
 Որ նա գիւլթական խօսքով իր հզօր  
 Բուժի հէգ որդու կուրծքը վիրաւոր...

## XXXI

Բայց Ղամար Սուլթան դաժան, զայրացած՝  
 Հրրեց Իսուփին, գոչեց կատաղած.  
 «Հեռու ինձանից, հեռու, դու ըստոր,  
 Անարգ, անարժան որդի դու քաջ հօր..  
 Լաւ էր, որ եթէ բերէին ինձ մօտ  
 Անզգայ, անշունչ քո դին արիւնոտ  
 Եւ ինձ ասէին՝ մեռաւ քո որդին,  
 Հօր նրւիրական աւանդը ձեռքին...  
 Գնա՛, հեռացիր, գարշնչի էակ,  
 Էլ այսուհետև ես չ'ունեմ զաւակ...»

## XXXII

Այն ուր է նստած շիրմի առաջին  
 Ու կէս գիշերին լալիս դառնազին.  
 Այն ուր է սգում, անվերջ հեծկտում  
 Եւ գերեզմանի հանգիստը խախտում.  
 Այն ուր է թեքել գրլուխը յոգնած  
 Այն սառը քարին, ողբում վշտացած...  
 Նա Իւսուփն է հէգ, Իւսուփը թշուառ,  
 Արտաքսուած մօրից, հալածուած խապառ...  
 Բայց տապանի մօտ ինչո՞ւ էր ողբում  
 Գիշերուայ կիսին — ինքն էլ չէր գիտում...

## XXXIII

Բարձր ուռննու ճիւղերի միջից  
 Զողքը թափել էր լուսինը վերից,

Նախշել Արուի սառը գերեզման:  
 Լուռ էր Հոռեկայ տխուր մենաստան:  
 Տանջում էր Իւտուփ դառը վշտերից,  
 Տանջում էր մռայլ, դաժան մտքերից ..  
 Կարծես՝ հնչում էր նորա ականջին  
 Հայրական ահեղ անէծքն ուժգին.  
 Կարծես՝ մամուսպատ հողը ճեղքելով,  
 Իր գերեզմանից ելնում էր Արուի...

## XXXIV

Ահա նա, ահա... Նա ուռննու տակ  
 Կանգնած է ահեղ, ահեղ, դժնդակ...  
 Կանգնած է, ծածկուած ճերմակ պատանքով,  
 Եւ ս...ում անթարթ, խոժոռ հայեացքով...  
 Սոսկում է Իւտուփ և դողում ահից...  
 Արդեօք ուր փախչի ահեղ տեսիլից...  
 Նա հետևում է՝ անէծքը բերնին,  
 Նա մօտենում է ահա զայրաղին,  
 Կարծես՝ ոսկրազած ձեռներով դաժան  
 Ուզում է խեղդել որդուն անարժան...

## XXXV

«Ա՛հ... խնայիր ինձ, հայր... Ներիր անարգուած,  
 Ստո՛ր, գարշելի՛ որդուդ հալածուած...  
 Քո սուրբ պատուէրը տուի ոտնատակ,  
 Թողի անկատար քո վերջին կտակ...  
 Սառ հողում թաղուած փառքիդ անարատ  
 Անարգանք թափեց որդիդ հարադատ...  
 Բայց ներիր ինձ, հայր... Արեամբս կարմիր  
 Կը լուամ իմ սև ամօթը զաղիր...»  
 Ահեղ ուրուականն յանկարծ չբացաւ:  
 Այգը բացում էր: Իւտուփ հեռացաւ:

## XXXVI

Եւ ահա Իւտուփ՝ արցունքըն աչքին՝  
 Եկաւ ու կանգնեց իր մօր առաջին.

Մայրիկ, արտաքսուած որդիդ անարժան  
Քեզ չի ազերսում, որ ներես նորան —  
Նա չէ արժանի որդիդ կոչուելու,  
Զ'ունի իրաւունք կրժքիդ փարուելու:  
Դիմում է նա քեզ, իբրև մի զինուոր,  
Խնդրում է նա քեզ, իբրև ազգի մօր,  
Որ տաս նորան զէնք պնայ, մաքառի,  
Իր հօր կորուսած փառքը յետ բերի...»

## XXXVII

Եւ մօր կեղեքուած սրտից ցաւազար  
Գարծես՝ զլորուեց մի ծանր լեռ բար.  
Յուսոյ առաջին նշոյլը փայլեց  
Այրին յուզուեցաւ, կուրծքը բաբախեց...  
Էլ նորա առաջ նախկին թոյլ, անզօր  
Իւտուփ չէր կանգնած — այլ մի ահաւոր  
Գորին բաջարի, որի աչքերում  
Առիւծ Սբոյլի ոգին էր փայլում.  
Իբրև մարմնացած անլեհերութիւն,  
Նա զէնք էր խնդրում թափելու արիւն:

## XXXVIII

Բայց Ղամար Սուլթանն էլ ոչինչ չ'ունէր —  
Որդու համար զէնք սրտեղից ճարէր:  
Քամրազն ազահ, դաժան, նենգաւոր  
Խլել էր արդէն բարիքը բոլոր.  
Յափշտակելով ելբօր կալուածքներ  
Եւ կողոպտելով նորա տան դոյրեր,  
Հէգ իշխանուհուն թողել էր աղքատ,  
Ամեն բանից զուրկ, զո՛ւրկ և յուսահատ:  
Նայեց Իուտուփին Ղամարը թշուառ,  
Նայեց այլայլուած, յուզուած ու շլւար...»

## XXXIX

Եւ ձեռքն յանկարծ տարաւ զէպի վեր,  
Պոկեց ճակատից իր ոսկէ շարքեր,

Եւ իշխանական զարդը թանկագին՝  
 Վեհ ու մեծասլանձ՝ շարտեց զետին.  
 «Այս է մնացել... տանր, իմ որբ զաւանկ,  
 Տանր իմ այս վերջին բարիքը միակ,  
 Տանր, զէնքեր վնէր, կռուիր անվեհեր,  
 Հօրդ կուրուսած աւանդը յետ բեր,  
 Օջաղս աւեր կրկին նորոգիր,  
 Քո հօր տան հանգած ճրագը վառիր...»

## XL

Միւս առաւօտեան արևը պայծառ  
 Երբ ցոյքը ոսկէ թափել էր աշխարհ, —  
 Ապարանքի մօտ, ջորիքը բարձած  
 Ոսկով-արծաթով, նժոյգը հեծած՝  
 Կանգնած էր պատրաստ թուրք հարկահանը,  
 Ունին Աբովի սուրբ հրրացանը.  
 Թամրագը՝ կանգնած բաղքը ժպիտով  
 Եւ շրջապատուած իւրայիններով  
 Առօք ու փառօք ճանբայ էր գցում  
 Թանկագին հիւրին, բարի երթ մաղթում:

## XLI

Հրաժեշտը վերջին տալով Թամրագին,  
 Իր նօքարների խմբով միասին  
 Հարկահանն իր ժողուած հարկերով  
 Ընկաւ ճանապարհ լեռան լանջերով,  
 Բարձր, սեպացած ժայռի կատարից  
 Մռայլ ամրոցի պատի բարձունքից,  
 Նայում էին լուռ աշտարակները,  
 Նայում գէպի այն հեռու լեռները,  
 Ուր անյայտացաւ թշնամին անհետ,  
 Տանելով հայի պատիւը իր հետ:

## XLII

Մռայլ, ահաւոր ձորի խորքերում  
 Թարթարըն անվերջ թնդում է, գոչում:

Հսկայ վիշապի նման կատաղած՝  
 Առաջ է վազում յուզուած, փրփրած.  
 Առաջ է վազում նա գալարուելով,  
 Գետնի ապառաժ կուրծքը ճեղքելով.  
 Գոչում է ուժգին, բարձր մոնչում,  
 Եւ ահեղ ձայնով շուրջը լժնդացնում.  
 Ափերը լեռնոտ շարժում է տեղից,  
 Ժայռերը ծեծում, քերում ներքից:

## XLIII

Դաժան ափերից ճնշուած ու նեղուած՝  
 Բողոք է բառնում զետը դայրացած.  
 Բայց այնտեղ ահա ծառերը դալար  
 Երկու ափերից կազմել են կամար  
 Եւ, խոնարհուելով Թարթարի վերայ,  
 Յորդոր են կարգում, որ նա մեղմանայ.  
 Արևն էլ ոսկէ շողքերը վերից  
 Թափել էր ներքև ճիւղերի միջից,  
 Զուրը փայփայում, հետը խաղ անում...  
 Սակայն նա դարձեալ յուզուած էր, գոչում:

## XLIV

Եւ անդնդախոր ձորի եզերքին,  
 Ուր ամբառնում են ծառերը երկին,  
 Նեղ, օձապտոյտ շաւղի վերայով  
 Մի կարաւան էր ընթանում ահով.  
 Եւ ձորը բացած ահեղ բերանը,  
 Ուզում էր կուլ տալ ողջ կարաւանը.  
 Մի թեթև շարժում, անդգոյշ մի քայլ —  
 Նա կը գլորուի անդունդը մռայլ.  
 Այնտեղ վրիժառու, յուզուած, դայրազին՝  
 Թարթարը կատղած սպասում է գոհին:

## XLV

Ականջ զնելով գետին վերևից՝  
 Գարաւանը լուռ անցնում էր ձորից.

Գիւլխտանից էր նա վերադառնում,  
 Պարսից արքայի մօտ էր նա գնում.  
 Հայ փառաւորներից հաւաքած ոսկին  
 Տանում էր իր հետ, որ յանձնի շահին.  
 Տանում էր իր հետ հայի բրտիրբը,  
 Հայից կողոպտած զէնքն ու բարիքը,  
 Բայց Հայոց երկրի բնութեան ծոցում  
 Այժմ մի տեսակ սարսուռ էր ըզգում...

## XLVI

Եւ ահա ձորի բարձր եղիւրբին,  
 Կապոյտ երկնքի կամարի տակին,  
 Իբրև մի արծիւ՝ յանկարծ երևաց  
 Երովի որդին ըսպառազինո՛ւած...  
 Քաջ ու անվեհեր նա ձայնեց <sup>6)</sup> վերից —  
 Եւ ահա յանկարծ թվերի տակից  
 Հայոց հրացաններն ուժգին լծնդացին  
 Ծխի քուլաներն երկինք վերացրին.  
 Գռին ահեղ իսկոյն բորբոքուեց...  
 Սոսկաց թշնամին... Տազնապը տիրեց...

## XLVII

Եւ դիակներն՝ արիւնով շաղուած  
 Գլորում էին ձորից գէպի ցած,  
 Անհետ չքանում անդունդի խորքում...  
 Վերից մահաբեր վնդակ էր տեղում.  
 Ձիեր և ջորիք ահ ու սարսափով  
 Վազվզում էին զառիվերնհրով.  
 Ցածում Թարթարն էր մոլեգնած զոշում, —  
 Վերև ահարկու մարտըն էր եռում.  
 Զուրջը լցում էր ահով ու մահով,  
 Կածանը ներկում թուրքի արիւնով...

## XLVIII

Ահա, հարկահանն այնտեղ զարհուրած՝  
 Ուզում է փախչել, մահից սարսափած.

Քայց Իւտուփ՝ ճարպիկ եղնիկի նման՝  
 Վաղում է վերից՝ կտրիճ, անասան.  
 Փայռի կատարից նա թուրը ձեռքին  
 Ահա թուա ցած և հասաւ թուրքին...  
 Թուրը շողշողաց պայծառ արևից,  
 Խրուէց թշնամու կուրծքը չարալից...  
 Արիւնը ցայտէց քաջի երեսին...  
 Թուրքը մռնչաց, աւանդեց հողին...

## XLIX

Տաղնապն անցաւ, հօր սրբանուէր  
 Աւանդը փրկեց որդին անվեհեր:  
 Ձինակիցները ահա ժողուեցին,  
 Հրջապատեցին ջահէլ Իւտուփին,  
 Մէկ-մէկ պագեցին դէնքը սրբազան,  
 Երպեցին իրանց երգը յազթական:  
 Եւ երբ թերուհեցաւ պայծառ արևը  
 Մտաւ Թարթարի ձորի յետևը —  
 Թշնամուց խլած բարիքըն առան,  
 Ճանապարհ ընկան դէպի Գիւլիստան:

## L

Ղամարը երկմիտ և աչքը ճամբին  
 Դեռ ըստասում էր, եւ յանկարծ որդին,  
 Հրջապատուած իր քաջ ընկերներով,  
 Ամրոցը մտաւ յազթական դէմքով,  
 Մի ձեռքին թուրքի զլուխըն էր բռնած,  
 Միւս ձեռքին իր հօր աւանդը փրկուած...  
 Մայրը սրտատրուփ վրկեց Իւտուփին,  
 Խելապարի պէս՝ սեղմեց իր կրծքին...  
 Եւ իշխանուհու յովնատանջ սրտից  
 Վիշտը փարատուեց, չքացաւ թախիծ...

## LI

Գիւլիստան բերդի պարըսպի տակին,  
 Զեռոտ, դառիվեր այն բարձր ճամբին,

Ամբոխը ժողուած իրար է անցնում,  
 Խոնուում յուզուած, բարձր աղմբիում.  
 Այնտեղ, վերնում՝ ամրոցի դռան,  
 Իւսուփը կանգնած՝ դիւցազնի նման՝  
 Բաժնում էր ազգին յետ խլած ոսկին,  
 Վշտահար հային ըստփուում կրկին...  
 Ամենքը բաջին փառաբանելով,  
 Թնդացնում էին շուրջըն օրհնանքով:

## LII

Ամբոխը դիւթուած ջահէլ մելիքից,  
 Դիւթուած, հմայուած նորա վեհ գործքից,  
 Ալեկոծուում է, յուզուում, բորբորում,  
 Մելիք Թամրազին անվերջ անիծում.  
 Եւ ժողովրդի անէծքը դաժան  
 Լսում էր հեռուից Թամրազ անարժան,  
 Լսում էր սոսկում իր ճակատալրից,  
 Մարսափում մուայլ, սև սև մտքերից...  
 Օ՛, մեթէ անգութ փառքը Թամրազին  
 Հուտով պիտի տար հրաժեշտը վերջին...

## LIII

Լեռների յետև, դաշտավայրում հարթ,  
 Որտեղ հոսում է Սև-ջուրը հանդարտ,  
 Կանգնած էր տխուր, իբրև սգաւոր,  
 Ղանլու Չինարի <sup>1)</sup> ծառը դարաւոր.  
 Նորա հաստ ճիւղին, բարձր եթերում,  
 Նիխուած դիակ էր ճօճում, օրօրում...  
 Նորա այլանդակ և ահեղ դէմքին  
 Մնացել էր սառած տանջանքը վերջին.  
 Քամին փչում էր, դիակը շարժում  
 Եւ հոտը գազիր շուրջը տարածում..

## LIV

Մեռան շարաննեղ Թամրազը դաժան,  
 Մեռան հայի զեղիս պետըն անարժան...

Կախուեցաւ ծառին ոչ թէ զղջումից,  
Այլ քաջ Իւսուսիի արդար վըրէժից<sup>8)</sup>...

Յարուսիւն Թումանեանց

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Դեռ 1701 թուին Ղարաբաղի մելիքները գիւմել էին Պետրոս Մեծին և խնդրել նորա հովանաւորութիւնը, որ կարողանային ապահով պատերազմելու թուրքերի դէմ:

2) Մելիք-Աբովը մեռաւ 1728 թուին, այն ժամանակ, երբ դեռ մելիքները սպասում էին Ռուսների օգնութեան:

3) Մելիք-Աբով II ունէր «Կաղ» մականունը. այդպէս էին կոչում, որովհետեւ նորա մի ոտը գնդակի հարուածից կաղ էր:

4) Մելիք-Աբովի այդ հրացանը, որ Մելիք-Բէգլարեանների ժառանգները հազար ուսուցիչով ծախեցին գեներալ Սրմուլովին, այժմ գտնւում է Պետերբուրգի Արուսթէյնի պալատում:

5) Ամենափրկիչ վանք, որ գտնւում է Գիւլիստանից երկու վերսա հեռու, մի անտառոտ ձորակում:

6) Յարձակման պայմանական նշանարանն էր «ծկըտ», իսկ դադարմանը—«մկըտ»:

7) Ղանու-Չինարը (=արիւնոտ չինարի) գրտնւում է Գիւլիստանի և Ջրաբերդի սահմանի վերայ. այժմ մնացել են միայն նորա կոճղները: Սորա մօտ է գտնւում Աղջաղալա գիւղը, որ կոչւում է նաև Ղարա-չինար (=Սեւ-չինարի):

8) Իւսուսիքը, յարձակուելով Թամրազի ապարանքի վերայ, մի քանի օր կռուելուց յետոյ, առնում է նորան և բռնում Թամրազին, որին անմիջապէս հրամայում է կախ տալ չինարի ծառից:

«Մելիք-Իւսուսիք» գրելիս, բացի իմ ճանապարհորդական յիշողութիւններից և այլ աղբիւրներից, օգտուել եմ նաև հետեւեալ աշխատութիւններից.

Րաֆֆի.—Թամասյի մելիքութիւններ:

Գիլտա. ք. Աղանեան.—Դիւան Հայոց Պատմութեան.

Դ. Յոթ.—«Сношения Петра Великого съ Армянскимъ народомъ.»

Հալայեան.—«Աղգագրական հանդէս.»

Հեղինակ.